

յեալ գործադրող մարմնից որպէս և սա չի պիտի իշխեր ոչ գաշինք  
կռել, ոչ փոխառութիւնք գործել և ոչ պետութեան կայքը գրաւ գնել  
առանց միւսի համաձայնութեամն, Պետութեան ութ նախարարների և  
սոցա ստորադրեալ պաշտօնեաների ընտրութիւնը, ցամաքային և ծովա-  
յին զօրքերի վարչութիւնը պատկանելու էր գործադրող մարմնին,  
Ժողովի հոգին էր Մավրոկորդատոս, և սա նշանակուեցաւ գործադիր  
իշխանութեան նախագահ։ Իսկ Եպիսկոպոսին, Սորեայի Գէրուզիայի  
գահերեցութիւնը մերժելուց յետոյ, դարձաւ խորհրդական մարմնի  
նախագահ։ Այսպէս յաւարտ ելաւ պետական իշխանութիւնը, որ  
պատշաճօրէն կազմուելուց յետոյ ասես թէ լիովին ձեռնհաս պիտի  
լինէր հոգալու յաջորդ տարիների պէտքերը, Կառավարութիւնը հաս-  
տատեց իւր նիստը նախ և առաջ Առնթի մէջ, որ նոր խլուած էր  
մշնամու ձեռքից։

Դժբախտաբար շուտով ամեն տեսակ բաժանմունք ծագեցան ուստի կոչուած խմբի (Մավրոկորդատոս, Կողէաթու և այլք) և է-պէտականուած զինուորական մեծաւորների (Կողօկոտրոնիս, Նիկիտաս եւ այլն) մէջ, առաջին խումբը կոչվումէր նաև ազնուապետական և երրորդը՝ ռամկապետական։ Այս ներքին գժտութիւնը մուտք գտաւ մինչև անգամ և երկու բարձրագոյն իշխանութիւնների մէջ։ Գործադրող իշխանութիւնը փոյթ էր տանում սեղմելու զինուորական պետերի ոյժը, իսկ խորհրդական իշխանութիւնը միտումէր դէպի վերջինների կողմը։ Խպիտառութոսի մէջ ազգային ժողովի ձեռքբով հաստատուած ուսմանագրութիւնը յետոյ վերաքննութեան ենթարկուեցաւ, որին մասնակից եղան նոյնպէս և Թեսոսալիայի, Յիկլաղների և Սպօրադների, Ազինայի, Սալամիսի և Կրէտայի պատգամաւորները։

( ०-८--२-४-६-८-१-३-५ )

$\beta = \mu^2 + \gamma$ ,  $\beta = \mu^2 - \gamma$ ,  $\beta = \mu^2 \pm \gamma$

Φ· Φ· Φ· Φ· Φ· Φ· Φ· Φ·

## ԲԱՆԱԿԱՐԱՎԱՆ

Բայց այս վեհապետությունը կազմությունը կազմությունը կազմությունը

Կարծիս Հայաստանի բևեռաձև արձանագրութեանց զիւտը ինձ է վիճակված 1862 թռւից՝ իմ հոգեկան ցանկութեանս և բնաւորութեանս համաձայն, որոց ընթերցանութեան և թարգմանութեան ժամանակն համարեալ հասել է, քանզի բացի օտարազգի հնագէտ թարգմաններէն, զորօրինակ Մ. Կրօդէֆէնդ Գերմանացին, Բասբ, Պիւրնուփ, Ժաքէթ,

Պէհը, Լասոսէն, Պէնֆէ, Շպիկը՝ Եղուարդ Հինքս Անգղիացի, Մ. Մօրթման և այլն, գտնուում են այժմ նաև Հայազգի հնագէտ թարգմանք բեկուածեւ արձանագրութեանց, զորօրինակ Յովհաննէս Էֆէնտի Հիսարլեան ի Ա. Պօլիս, Պրօֆէսսօր արևելեան լեզուաց Պ. Քերովքէ Պատկանեան ի Ս. Պետերբուրգ, և այլն:

Ի զարդ Արարատ ամսագրոյդ և ի նիւթ աշխատութեան հնագիտաց աշաւ տամ խմբագրութեանդ 13 տողով մի նոր բեկուածեւ արձանագրութեան օրինակ ևս, որ այս օրերս գտնուեցաւ Արմաւրայ բլրի բերդապարսպի աշտարակի որմոց մէջ՝ աշխատութեամբ Մովսէս քահանայի Արմաւիրցւոյ, որը կարծեմ 1869 թուին նոյն տեղում գտնուած՝ նոյնպէս 13 տողով արձանագրի կէս մասն լինի, և խնդրեմ Արարատ ամսագրի միջոցաւ հրատարակել զայն ի տես ամենայն ցանկացողաց:

Այս արձանագրին վեցերորդն է Արմաւիրեան բեկուագրոց, որը տեղափոխելով այս տեղ՝ զրուեց Ս. Էջմիածնի Ճեմարանի հանգէպն\*).

Այս արձանագրի օրինակն ուղարկելով Ի Ս. Պետրուրդ առ արևելագէտ Պրօֆէսսօր Հայազգի Պ. Քերովքէ Պատկանեան՝ ստացայ հետեւալ պատասխանն. որ նոյնութեամբ աշաւ տամ տպագրութեան, որոյ մէջ է և թարգմանութիւնն յիշեալ արձանագրութեան:

Եւ նամակն է այսպէս:

\* Զերդ Արբազնութիւն՝ Մեսրովք Եպիսկոպոս Ամբատեանց,

\* Միծ ուրախութեամբ ստացայ Զեր վերջի ուղարկած նամակը բեկուածեւ արձանագրութեամբ և առ ժամայն նստայ կարդալու, բայց ուրախութիւնս երկարատեւ չեղաւ, որովհետեւ Յօլակերտի արձանագրութիւնը մամուապատ գոլով՝ բոլոր ձախ կողմը աննշմարելի էր մնացել:

\* Նոր Արմաւիրեանը գրեթէ բոլորովին կարդացի, բացի 2 - 3 տառից, որ աննշմարելի են մնացել. Այդ արձանագրի թարգմանութիւնը մերձաւորական միւս երեսումը գնում եմ ի գիտութիւն Զեր, և եթէ կամենաք, Արարատի մէջ տպագրել տուեք իսկական արձանագրութեան հետ:

## ԺԱՐԱՊԱՍՏԻՎ

(\*) Պերապատիւ Տէր Մեսրովք Արբազան Եպիսկոպոս Ամբատեան շրջելով հին Արարատ նահանգի զանազան կազմերը պատահաբար եւ յատուկ խուզարկութեամբ գտել է զանազան տեղերում թիւնեւածեւ արձանագրութիւններ. եւ փոյթ է ունեցել հրատարակելու Այդմ որ սեպածեւ գրաւթեանց Ընթերցումը մի որոշեալ աստիճանի յաջողութիւն է գտել. ցանկացի էր որ թէ Դոբին Արբազնութիւնը եւ թէ այլ ձեւնհաս անձինք հետամուտ լինէին գանել եւ ի լոյն ընթացել Հայատանի նախնեաց յիշատակարանների ցայսօր թագուցեալ գանձը, իսկ Արարատի խմբագրութիւնը հաճութեամբ մւտի կը հրատարակէ. չնորդաւալութիւնն յայննելով եւ յաջողութիւն ցանկալով հնամէրներին:

- Ափսո՞ս, որ Զաղալուի արձանագրութեան գոնէ 2եր արտագրութիւնը ինձ չուղարկեցիք, որ կարողանայի ըստ կարեաց վերականգնել և ուղարկել արտասահման ո՞ր և իցէ Օրագրում տպելու.
- Նոր Արմաւիրեանը հազիւթէ լինի կէսը առաջին 13 տողեայ արձանագրութեան, և թարգմանվումէ առանց լրացնելոյ հնից:
- Այժմ Վանայ արձանագրութեամբ սկսել են պարապել ամեն տեղ, և միայն նոր նոր օրինակներ են սպասում. Այդ մասին թէ Եւրոպական հնախուզաց և թէ Հայրենասիրաց մեծ ծառայութիւն արած կլինիք, եթէ այս ամառը լուսանկարով շրջէք 2եր իմացած տեղերը, և նոր նոր գիւտեր ընծայէք գիտութեան. Մանաւանդ չմոռանաք Ալիչալուն: Յառաջազրեալ թարգմանութիւնը ի հարկէ մերձաւորական է միայն, որովհետեւ Վանի արձանագրութեանց ընթերցումն գեռ շատ նորարդոյն է և կարօտ է զանազան ուղղութեանց: Քանի օրինակներն աւելնան, այնքան ընթերցմունքն էլ կուղղվի և կյառաջանայ:
- Անհամիերութեամբ սպասում եմ 2եր նորանոր գրութեանց և գիւտերին:

2երդ Սրբազնութեան . . .

ՔԵՐՈՎԱԲԵԿ ՊԱՏԿԱՆԵԱՆ:

ԱՀԱՌ ԱՐԵՎԱՆ ԱՐԵՎԱՆ

1. Տեսան Աստուծոյ Խալդեայ. ? զտաճարն
2. Սարգուրիս
3. Արդիստիսեան
4. Վերականգնեաց զսա.
5. Աստուծոյ Խալդեայ ??
6. ԶՀՆԱՑԵԱԼՆ. Ճօնեաց ?
7. . . . Աստուծոյ Խալդեայ
8. Եւ բազմաթիւ զաւակացն Խալդեայ
9. Սարդուրիս արքայ հզօր,
10. Արքայ մեծ, արքայ աշխարհաց,
11. Արքայ աշխարհին Բիայնացոց,
12. Արքայից արքայ, բնակեալն
13. Ի քաղաքին Տոսպայ.

ՄԵՍՐՈՎԱԲԵԿ ԵՊԻՄԿՈՊՈՅ ՍՄԲԱՑԵԱՆ:

ԱՐՄԵՆԻԱՆ ՎԵՅԵՐՈՒԴ ԱՐՉԱՆԱԳԻՐ, ԳՏԵԱԼ Ի ՀԿՐԻՎ 1883 ԱՄՐ,  
Ի ՄԵՄՐՈՒՆԻ, ԵՊԻՍԿՈՊՈՒՆ, ՄՄԲԱՏԵԱՆՑ,



